Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԱԴ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան -1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2024-31.12.2024թթ |
| Հաշվետու ժամանակահատված | 03.01.2024.--31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 10.01.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 76 շահառուի Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է՝ 46 դեպքի վարում, որից
  37-ը՝ վերափաստագրման գործընթացի կազմակերպում ընտանեկան նպաստ համակարգում
  6-ը՝ աջակցող միջոցի ծեռքբերման կազմակերպում
  3-ը՝ ընտանիքի անապահովության միավորի տեղեկանքի հիման վրա կազմակերպված վիրահատություն):
  4 շահառուի համար սոցիալական աշխատողը ներկայացրել է եռամսյակային հրատապ օգնության դիմում:
  8 շահառուի համար սոցիալական աշխատողը առցանց դիմում է ներկայացրել կենսաթոշակի ու նպաստի ստացման տեսակի փոփոխության համար
  Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 24 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 12 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի նյարդային լարվածության թուլացմանը,հույզերի կառավարմանը,տագնապային իրավիճակների հաղթահարմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Իրականացվել է Սննդային փաթեթի տրամադրում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից 71 շահառուի:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 18 միջոցառում և 6 էքսկուրսիա, որոնց մասնակցել է թվով 32 շահառու (միջոցառումների մասին ավելի մանրամասն ինֆորմացիան ներկայացված է եռամսյակային հաշվետվություններում):
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 76 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի

կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:

- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը:
  Հաշվետու ժամանակահատվածում.
  - անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 32 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք:
  - 10 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով:
  - 1 շահառուի շարունակական կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական),
  - 28 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա:
  - 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի հիման վրա,
  - 8 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ,
  - 9 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք,
  - 6 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է վերջինիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուին:
  - 1 շահառուի համար իրականացվել է բաց վերքի մշակում և վիրակապում՝ շարունակական:
  - 3 շահառուի համար կազմակերպվել է ստացիոնար բուժման իրականացում:
  - 4 շահառուի համար տնային պայմաններում իրականացվել է հետազոտությունների հանձնման կազմակերպում:
  - 5 շահառուի համար կազմակերպվել է անվճար աուդիոմետրիա:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում հրապարակված նյութերի հղումները տեղադրվել են եռամսյակային հաշվետվություններում:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը**:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները** (կցելով նաև շահառուների ցուցակը):

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում

- Աջափնյակ-Դավթաշեն համայնքները սպասարկող սոցիալական աշխատողը մասնակցել է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված սեմինար-համդիպմանը՝ուղղված անձի ֆունկցիոնալության գնահատման նոր ներդրված համակարգի որոշման չափորոշիչներին:
- Աջափնյակ-Դավթաշեն համայնքները սպասարկող թիմի պատասխանատու սոցիալական աշխատողը մասնակցել է տարեցների պաշտպանության ցանցի անդամ կառույցների ներկայացուցիչների, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից նախաձեռնած մեկօրյա վերապատրաստմանը՝ փորձի փոխանակմանը: Վերապատրաստումն իրականացրել փորձագետ, ով տիրապետում է մի շարք երկրներում տարեցների խնամքի և աջակցման կենտրոնների հիմնադրման և գործարկման աջակցման փորձին:
- Աջափնյակ-Դավթաշեն տարածքային կենտրոնի սոցիալական աշխատողն ու բուժքույրը մասնակցել են Եվրոպական միության փորձագետների կողմից անցկացրած թրեյնինգներին՝ ուղղված սթրեսի և տարբեր տրավմաների հաղթահարման ուղիներին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 61 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 28 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 23 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 47 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 1<br>Բ - 74 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 32 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 6 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն<br>սննդային փաթեթի տրամադրում | 12<br>71 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Միխթարյան* «10»01.2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)